# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՍՏՃՕ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 63 - 64 (16662) ՇԱԲԱԹ, 11 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԱՐԵԼԻՑ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՏԱՍՆԱՄՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Օգոստոսի 8-ին, ռուս-վրացական պատերազմի 10-ամյա տարելիցի կապակցությամբ, Վրաստանի իշխանության ներկայացուցիչները, արտասահմանից հատուկ ժամանած բարձրաստիճան հյուրերը, Թբիլիսիի Մուխաթգվերդիի եղբայրական գերեզմանատանը, հարգանքի տուրք մատուցեցին եւ ծաղիկներ խոնարհեցին 2008 թվականի օգոստոսյան պատերազմի զոհերի հիշատակին:*



Զոհված հերոսներին իրենց խոնարհումը բերեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն, Վրաստանի կառավարության եւ խորհրդարանի անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, հանրության ներկայացուցիչներ: Այստեղ էին նաեւ օգոստոսյան պատերազմի 10-րդ տարվա կապակցությամբ Վրաստանին իրենց աջակցությունը ցուցաբերելու համար, հատուկ ժամանած, Լեհաստանի, Լիտվայի եւ Լատվիայի արտաքին գործերի նախարարներ Յացեկ Չա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՑ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄՆ Է»

*Օգոստոսի 9-ին, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, ռուս-վրացական օգոստոսյան պատերազմի 10-ամյա տարելիցին նվիրված մամլո ասուլիսում, Ռուսաստանին կոչ արեց կատարել 2008 թվականին կնքված հրադադարի մասին պայմանագրով ստանձնած պարտավորությունները եւ դուրս բերել ռազմական ստորաբաժանումները Վրաստանի տարածքից:*



- Մեր բարեկամ երկրները եւ միջազգային ինստիտուտները մեկ անգամ եւս մեր երկրին եւ այն արժեքներին աջակցող հստակ հայտարարություններ են արել, որոնց ուղղությամբ աշխատում ենք,- հայտարարել է վարչապետը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

*Ռուսաստան-Վրաստան պատերազմի 10-ամյա տարելիցին չորս երկրի բարձրաստիճան պաշտոնյաներ, Վրաստան այցից բացի, վերջին օրերի ընթացքում Վրաստանի նկատմամբ համերաշխության եւ կայուն աջակցության դրսեւորման փաստերով հանդես եկան մի շարք բարեկամ երկրներ:*

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Հիզեր Նաուերթը մամլո ասուլիսում հայտարարեց, որ ԱՄՆ պետական դեպարտամենտը Ռուսաստանին կոչ է անում կատարել 2008 թվականի հրադադարի պայմանագրի պայմանները:

Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ իրականացված ագրեսիային արձագանքել է Twitter-ում: Դոնալդ Տուսկը հայտարարություն է տարածել վրաց լեզվով:

Եվրամիությունը Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ իրականացրած ագրեսիայի 10 տա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԲԵՐԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Օգոստոսի 8-ին, ռուս-վրացական պատերազմի տասնամյա տարելիցը, վրացիների, Վրաստանի բազմազգ բնակիչների հետ միասին, նշեց նաեւ վիրահայությունը:*

Համայնքի ներկայացուցիչները, Թբիլիսիի Մուխաթգվերդիի գերեզմանատանը, նաեւ՝ Բաթումիի, Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ծալկայի, Ախալցիխեի, հայաբնակ մյուս քաղաքներում եւ գյուղերում, ծաղիկներ խոնարհեցին Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշակոթողներին եւ շիրիմներին: Վիրահայերի ներկայացուցիչները մասնակցեցին նաեւ Թբիլիսիում Ռուսաստանի նախկին դեսպանատան մոտ անցկացված բողոքի հանրահավաքին:

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԿԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ 10-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ

*Օգոստոսի 7-ին, Թբիլիսիում, Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում, անցկացվեց՝ «Խաղաղության եւ անվտանգության համար-2008 թվականի Ռուսաստան-Վրաստան պատերազմից 10 տարի անց» խորագրով կլոր սեղանը:*



Կլոր սեղանին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուց, վարչապետ Մամուկա Բախտաձեից բացի, մասնակցում էին վրաց-ռուսական պատերազմի 10-րդ տարվան նվիրված միջոցառումներին մասնակցելու համար Թբիլիսի ժամանած Լեհաստանի, Լիտվայի եւ Լատվիայի արտաքին գործերի նախարարներ Յացեկ Չապուտովիչը, Լինաս Լինկեւիչուսը եւ Էդգար Ռինկեւիչը, ինչպես նաեւ՝ Ուկրաինայի փոխվարչապետ Պավել Ռոզենկոն:

Ինչպես նշվեց հանդիպմանը՝ Վրաստանի օկուպացումը սկսվել է ոչ թե 2008 թվականի օգոստոսին, այլ շատ ավելի շուտ՝ 1991-1992 թվականներին, երբ, ինչպես ընդգծեց Գիորգի Մարգվելաշվիլին, «Ռուսաստանը հիբրիդային պատերազմի օգնությամբ Վրաստանի կենտրոնական իշխանությունից անջատեց նրա երկու տարածաշրջանները»:

ՆԱԽԸՆՏՐԱՐՇԱՎ

## «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ՉԻ ԱՌԱՋԱԴՐԻ

*Օգոստոսի 6-ին, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության կենտրոնական գրասենյակում, անցկացվեց քաղաքական խորհրդի նիստ, որտեղ քննարկվեց առաջիկա նախագահական ընտրություններին կուսակցության դիրքորոշման հարցը:*

Նիստին, որը վարում էր «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին եւ, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների անդամներ, ելնելով երկրում ժողովրդա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Օգոստոսի 7-ին, պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը եւ նրա գլխավորած պատվիրակությունը:*




Այցի շրջանակներում՝ կայացավ Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնահանվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոյի եւ նրա առաջին տեղակալ Զազա Բո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԸՆՏՐԱՐՇԱՎ

# «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ՉԻ ԱՌԱՋԱԴՐԻ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

վարության սկզբունքների առավել խոր արմատավորման համար, նպատակահարմար համարվեց առաջիկա նախագահական ընտրություններին չառաջադրել կուսակցական թեկնածու եւ՝ հնարավորինս աջակցել ընտրություններին մասնակից անկախ թեկնածուին: Այդ մասին քաղխորհրդի նիստի ավարտից հետո հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

«Մենք ընդունել ենք սկզբունքային որոշում, որ «Վրացական երազանք»-ը չի առաջադրի իր թեկնածուին ընտրություններին»,- ասել է նա, չհստակեցնելով, թե, կոնկրետ, որ թեկնածուին են պատրաստվում աջակցել:

# ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԱՆԿԱԽ ԹԵԿՆԱԾՈՒ

*Օգոստոսի 6-ին Վրաստանի արտաքին գործերի նախկին նախարար, խորհրդարանի անկախ պատգամավոր Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարել է, որ մտադիր է՝ մասնակցել նախագահական ընտրություններին, որոնք տեղի են ունենալու հոկտեմբերի 28-ին:*



«Ես որոշում եմ ընդունել՝ իմ թեկնածությունն առաջադրել նախագահական ընտրություններին»: Զուրաբիշվիլին հավելել է նաեւ, որ, հաղթելու դեպքում, աշխատելու է երկրի կայունությունն ու միավորումն ապահովելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, ավելի վաղ՝ Սալոմե Զուրաբիշվիլին դիմում էր ներկայացրել Ֆրանսիայի քաղաքացիությունից հրաժարվելու մասին, քանզի Վրաստանում գործող օրենսդրության համաձայն, Վրաստանի նախագահը չի կարող ունենալ այլ երկրի քաղաքացիություն:

Հատկանշական են նաեւ առանձին ԶԼՄ-ների պնդումներն այն մասին, որ նախագահության թեկնածու առաջադրելուց հրաժարված «Վրացական երազանք» իշխող կուսակցությունը, հնարավոր է՝ աջակցություն հայտնի Սալոմե Զուրաբիշվիլու թեկնածությանը:

Ավելացնենք, որ Սալոմե Զուրաբիշվիլին 9-րդ գումարման խորհրդարանի անդամ է: Օրենսդրական մարմնում Սալոմե Զուրաբիշվիլին Մթածմինդա թաղամասի անկախ մեծամասնական թեկնածու է: Այժմ նա խորհրդարանի սփյուռքի եւ Կովկասի հարցերով կոմիտեի նախագահի առաջին տեղակալն է:

2004-2005 թվականներին Սալոմե Զուրաբիշվիլին զբաղեցնում էր Վրաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏՆՈՒՄ




*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրել է կուտակային կենսաթոշակային համակարգի մասին օրենքը:*

Փաստաթղթի հիմնական մասը ուժի մեջ է մտել օգոստոսի 6-ից, իսկ կենսաթոշակային համակարգը գործարկվելու է 2019 թվականի հունվարի 1-ից:

Ինչպես հայտնի է, մինչեւ 40 տարեկան աշխատողների համար համակարգին ներգրավվելը կլինի պարտադիր:

Օրենքի 3-րդ հոդվածում կարդում ենք. «Աշխատողը, որը մինչեւ փաստաթղթի գործարկումը դարձել է 40 տարեկան եւ, որը չի ցանկանում լինել մասնակից, իրավասու է դուրս գալ կուտակային կենսաթոշակային սխեմայից»:

Համապատասխանաբար, համակարգին ներգրավվելը պարտադիր է նրանց համար, ում 40 տարին չի լրացել 2018 թվականի օգոստոսի 6-ի դրությամբ, այսինքն՝ 1978 թվականի օգոստոսի 5-ից հետո ծնված քաղաքացիների համար:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

*Վրաստանի օրենսդիր մարմնի խորհրդարանական մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեն հանդես եկավ սոցիալական օգնության մոդելի վերանայման նախաձեռնությամբ:*



Մեկնաբանելով գործող մոդելը՝ պատգամավորը նշեց, որ սոցիալական օգնությանը զուգահեռ, մարդիկ պետք է ունենան լրացուցիչ աշխատանք գտնելու, լրացուցիչ եկամուտ ստանալու եւ աղքատությունն արագ հաղթահարելու հնարավորություն: Թալակվաձեի խոսքով, ներկայումս գործող մոդելի պայմաններում, սոցիալական նպաստ ստացող անհատը կորցնում է լրացուցիչ եկամուտ ապահովելու շարժառիթը, քանզի զգուշանում է, որ դա կարող է դառնալ նպաստի չեղարկման պատճառ: «Այսօր աղքատության շեմին գտնվող մարդիկ ստանում են սոցիալական նպաստ: Դա կայուն օգնություն է, սակայն, երբ այդ մարդը գտնում է լրացուցիչ եկամուտի աղբյուր, երկու-երեք ամսով կարողանում է գտնել վարձատրվող աշխատանք կամ մեկնում է սեզոնային աշխատանքի, նպաստի հանձնումը դադարեցվում է: Այդ պատճառով շատերը կորցնում են աշխատանքը եւ լրացուցիչ եկամուտ գտնելու շարժառիթը, շատերը վախենում են աշխատանք սկսելուց, քանզի կարող են զրկվել սոցիալական օգնությունից: Բայց չէ՞ որ մեր նպատակն է, որ մարդիկ կարողանան արագ հաղթահարել աղքատությունը, տնտեսապես ապահովեն իրենց ընտանիքը, ունենան իրենց եկամուտը: Հարկ է մտածել այն ուղղությամբ, որ գործող մոդելը փոխվի այնպես, որ սոցիալական նպաստ ստացող անհատները կարողանան գտնել լրացուցիչ աշխատանք, ստանան լրացուցիչ եկամուտ եւ արագ հաղթահարեն աղքատությունը»,- հայտարարել է Արչիլ Թալակվաձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խուայի հանդիպումը Արսեն Թորոսյանի հետ: Հանդիպմանը գործընկերները կրկին քննարկել են երկու երկրի միջեւ առողջապահության ոլորտում համագործակցության հուշագրի պայմանները:

Քննարկման հատուկ թեմա դարձավ Վրաստանում գործող առողջապահական համընդհանուր համակարգը, բուժծառայության ֆինանսավորման մեխանիզմները եւ դրանց մատչելիությունը:

Օրակարգային հարցերից էին Վրաստանի եւ Հայաստանի դեղագործական շուկաներում եւ դեղերի մատչելիության ուղղությամբ իրականացվող բարեփոխումները:

Անդրադարձ կատարվեց Վրաստանում 2018 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած՝ ծխախոտի վերահսկողության մասին օրենքին, որով արգելվում է ծխախոտային արտադրանքի օգտագործումը ցանկացած տիպի հաստատություններում: Արսեն Թորոսյանը բարձր գնահատեց հասարակական վայրերում ծխախոտի արգելքը եւ ընդգծեց, որ Հայաստանը ներկայում եւս քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ: Հայաստանի առողջապահության նախարարը հետաքրքրվեց օրենքի ընդունմանն ու ներդրմանն առնչվող հարցերով:

Այցի շրջանակներում՝ Հայաստանից ժամանած պատվիրակությունը ծանոթացավ Վրաստանի առողջապահական ենթակառուցվածքներին, այցելեց մի շարք բուժհաստատություններ, մասնավորապես, ընտանեկան բժշկության ազգային կենտրոն:



ԱՄՆ

## ԻՐԱՆԻ ԴԵՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑԻՆ

*Միացյալ Նահանգները վերականգնել է սահմանափակիչ միջոցները Իրանի դեմ այն բանի կապակցությամբ, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է Իրանի հետ միջուկային գործարքից Վաշինգտոնի դուրս գալու մասին, որը հայտնի է որպես Գործողությունների համատեղ համապարփակ ծրագիր (ԳՀՀԾ): Ամերիկյան վարչակազմում ավելի վաղ հայտարարել էին, որ Իրանի դեմ ԱՄՆ պատժամիջոցները վերսկսվել են օգոստոսի 7-ին:*

*Ընդ որում, սահմանափակիչ միջոցները վերաբերում են ինչպես բուն իրանական ընկերություններին, այնպես էլ՝ օտարերկրյա այն ֆիրմաներին, որոնք բիզնես են վարում Թեհրանի հետ: Ֆիզիկական այն անձինք ու ընկերությունները, որոնք աշխատում են պատժամիջոցների գործողության ներքո գտնվող ճյուղերում, իրենց տրամադրության տակ 90 օր ունեին իրենց գործունեությունը դադարեցնելու համար:*

*Հակաիրանական պատժամիջոցների երկրորդ մասը պետք է ուժի մեջ մտնի մինչեւ նոյեմբերի 4-ը: Այդ սահմանափակիչ միջոցները կվերաբերեն Իրանի էներգետիկական հատվածին:*

ԵՄ

## ՀԱԿԱԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԳԵԼԱՓԱԿՎՈՒՄ ԵՆ

*Եվրամիությունն օգոստոսի 7-ից արգելափակել է ԱՄՆ-ի հակաիրանական պատժամիջոցների գործողությունն իր տարածքում, ոպեսզի պաշտպանի եվրոպական ընկերություններին:*

*ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի եւ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարության մեջ ասված է, որ ԵՄ-ը խորապես ափսոսում է Իրանի դեմ ԱՄՆ-ի պատժամիջոցների վերականգնման համար, այն բանից հետո, երբ Վաշինգտոնը որոշեց դուրս գալ իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրից:*

*«Վեցյակի մնացած անդամները դեմ են արտահայտվել ԱՄՆ-ի այդ քայլին: Վաշինգտոնի եվրոպական գործընկերները հայտարարել են, որ մտադիր են պահպանել Իրանի հետ կնքված գործարքի պայմանները:*

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

## ՄԱՀԱՓՈՐՁ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԵՄ

*Մայրաքաղաք Կարակասում, շաբաթ օրը, օգոստոսի 4-ին, Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոյի վրա կատարած մահափորձի հետեւանքով, 7 մարդ վիրավորվել է: Ինքը՝ նախագահ Մադուրոն, չի տուժել:*

*Մահափորձն իրականացվել է անօդաչուների միջոցով, որոնց վրա ամրացված է եղել պայթուցիկ: Դրանք գործարկվել են Բոլիվարյան ազգային գվարդիայի կազմավորման 81-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառման ժամանակ, երբ նախագահ Մադուրոն ելույթ էր ունենում:*

*Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոյի դեմ մահափորձից հետո, երկրում լրագրողների ձերբակալություններ են սկսվել: Ձերբակալվել է 11 ինչպես ազգային, այնպես էլ՝ արտասահմանյան զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչ:*

Ծաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ԱՐԴԵՆ ՕԳՏՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՌՈՐԴ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻ

***Անցյալ տարվա մարտին, Եվրամիության երկրների հետ անայցեգրային պայմանակարգի հաստատումից հետո, արտոնությունից օգտվել է Վրաստանի 255,4 հազար քաղաքացի:***



Այդ մասին հատուկ հրավիրված մամլո ասուլիսում հայտարարել է Վրաստանի խորհրդարանի եվրաինտեգրման կոմիտեի նախագահ Թամար Խուլորդավան: Նրա խոսքով, Վրաստանի 255 հազար 429 քաղաքացիներ, անցած 14 ամիսների ընթացքում, 357 հազար 990 ուղեւորություն են կատարել Եվրամիության երկրներ:

Անդրադառնալով անայցեգրային պայմանակարգը խախտած քաղաքացիների թվին, Թամար Խուլորդավան նշել է, որ այդ մասին ստույգ տեղեկություն չունի, թեպետ՝ հավելել, որ խախտումներ թույլ տված քաղաքացիների թիվը կազմում է ընդհանուր թվի մոտ 10 տոկոսը, իսկ 1,5 տոկոսը սահմանից հետ են վերադարձվել:

Հիշեցնենք, որ Եվրամիության երկրների հետ Վրաստանի քաղաքացիների անայցեգրային պայմանակարգը ուժի մեջ է մտել 2017 թվականի մարտի 28-ից: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է Շենգենյան գոտու երկրներ կարճաժամկետ ուղեւորությունների (180 օրվանից 90 օրը) կատարմանը՝ զբոսաշրջության, գործնական նպատակներով կամ հրավերով:



### ԹԲԻԼԻՍԻԻ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 10 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՈՎ

*Հուլիսի 28-ին, Թբիլիսիի սակրեբուլոն ընդունել է մայրաքաղաքի ֆինանսական գլխավոր փաստաթղթի փոփոխությունները: Դրանց համաձայն՝ 2018 թվականի բյուջեն ավելացել է 10 միլիոն լարիով եւ կազմել 916 միլիոն 863 հազար լարի: Սակրեբուլոյում բյուջեի փոփոխության օգտին քվեարկել է 32 պատգամավոր:*

*Ինչպես հայտարարեց սակրեբուլոյում մեծամասնության ներկայացուցիչը՝ գործնականում այդ 10 միլիոն լարին կծախսվի քաղաքի տրանսպորտային ենթակառույցի զարգացման վրա:*

*Հիշեցնենք, որ Թբիլիսիի քաղաքապետարանը ծրագրում է արմատականորեն փոխել մայրաքաղաքի տրանսպորտային քաղաքականությունը:*

### ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

*Եվրոպական լավագույն երկրները՝ բիզնեսի համար - այս վերտառությամբ ամենամյա զեկույց է հրապարակել EuCham-ը, որտեղ Վրաստանը՝ շնորհված 69 միավորով, Եվրոպայի 46 երկրների թվում զբաղեցնում է 18-րդ հորիզոնականը:*

*Հետազոտությունը հիմնված է համաշխարհային բանկի եւ միջազգային թափանցիկության ինդեքսի, երկու հիմնական ինդիկատորի վրա:*

*Դրանք են բիզնես զեկույցը եւ կոռուպցիայի ընկալման ինդեքսի միավորը: EuCham-ի շնորհված միավորները գրանցվում են կորպորատիվ միջավայրը, օրենսդրությունը, կառավարական քաղաքականությունը, սոցիալական կլիման եւ պայմանները հաշվի առնելով:*

*Ցուցակի առաջատար՝ Դանիայի վարկանիշը 86 միավոր է:*

### ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԾԱԼԿԱ-ՆԻՆՈԾՄԻՆԴԱ ՃԱՆԱՊԱՐՀԸ

*Վերանորոգվում է Կոդա-Փարցխիսի-Մանգլիսի-Ծալկա-Նինոծմինդա ավտոմայրուղու 77-92 կմ հատվածը, Ծալկայի եւ մոտակայքի ճանապարհները:*

*Ճանապարհի վորանորոգման աշխատանքները կատարում է ՍՊԸ «Կավկասուս րոուդ պրոջեկտ»-ը: Աշխատանքները սկսվել են հուլիսի վերջին: Վերանորոգումը պետք է ավարտվի մինչեւ 2019 թ. դեկտեմբեր ամիսը:*

*Ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում, Ախալքալաքիի վարորդներից շատերը այլեւս այդ ճանապարհով չեն երթեւեկում, չնայած այն հանգամանքին, որ դրանով Թբիլիսի կարելի է հասնել ավելի արագ:*

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ

***Օգոստոսի 8-ին, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին եւ փոխնախագահ Գոչա Լորթքիփանիձեն, Գորիի մունիցիպալիտետի Տղվիավի գյուղում, հանդիպում են ունեցել 2008 թվականի օգոստոսյան պատերազմից տուժյալ կանանց եւ բռնազավթման գոտու երկայնքով ապրող բնակիչների հետ:***



Հանդիպմանը արդարադատության նախարարն ու փոխնախարարը խոսել են օգոստոսյան պատերազմի ժամանակ, հանցագործությունների հետաքննության նպատակով, միջազգային դատարանում ընթացող դատավարությունների մասին: Ինչպես նշեց Թեա Ծուլուկիանին, Վրաստանը պատերազմի հանցագործներին պատժելու նպատակով ակտիվորեն համագործակցում է Հաագայի միջազգային դատարանի հետ, որը հետաքննում է ռուս-վրացական պատերազմի ժամանակ կատարած հանցագործությունների գործը: Հանդիպմանը նշվեց, որ հետաքննության ընթացքի մեջ են ազգային զտման, վրաց ռազմագերիների կտտանքների եւ սպանության գործերը:

Հանդիպմանը խոսեցին նաեւ Ստարսբուրգի մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վարույթում գտնվող Վրաստան-Ռուսաստան միջպետական դատի մասին: Ինչպես նշեց Թեա Ծուլուկիանին, Վրաստանի դատարանը քննությանն է ներկայացրել ավելի քան 700 ապացույց:

Նախարարն ու փոխնախարարը պարզաբանել են նաեւ վերոնշյալ երկու դատարաններում հետաքննվող գործերի վերաբերյալ Վրաստանի սպասելիքների մասին:

ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

## ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱՆՔ՝ «ՑԻԱՆԻԴԻ» ԳՈՐԾՈՎ ԲԱՆՏԱՐԿՎԱԾ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՀԱՄԱՐ

***«Ցիանիդի» գործով բանտարկյալ Գիորգի Մամալաձեի փաստաբանները դիմել են Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն՝ սարկավագ Գիորգի Մամալաձեին համաներում շնորհելու խնդրանքով:***

Ինչպես հայտարարել է սարկավագի փաստաբաններից Գիորգի Փանցուլաիան, համաներման դիմումը եղել է այն բանից ելնելով, որ հանրությունը տեսել է, թե ինչ իրավական խախտումներ կան գործում: «Բոլոր հիմնական իրավական խախտումները, որոնք առկա էին այս գործում, փոխանցել ենք Վրաստանի նախագահի վարչությանը, կցել որոշ բովանդակության փաստաթղթեր, որոնք նրան կհամոզեն, որ գործը կողմնակալության տարրեր ունի է»,- նշել է Գիորգի Փանցուլաիան:

Հարցին, ակնկալո՞ւմ են, արդյոք, փաստաբանները, որ նախագահը համաներում կշնորհի սարկավագ Գիորգի Մամալաձեին, Գիորգի Փանցուլաիան պատասխանել է, որ նա չի պատկերացնում այլ տարբերակ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ



## ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՏՈՒՐԻՍՏ՝ ՄԻԱՅՆ ՀՈՒԼԻՍԻՆ

***Հուլիս ամսին Վրաստան է այցելել 1 միլիոնից ավելի միջազգային այցելու: Այս ցուցանիշը 10,5%-ով ավելին է՝ 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:***

Տուրիզմի ազգային վարչության ղեկավար Գիորգի Չոգովաձեի ներկայացրած վիճակագրության համաձայն, զբոսաշրջիկների, միջազգային այցելուների, ովքեր մեկ օրից ավելին են անցկացրել Վրաստանում, հուլիս ամսվա կտրվածքով կազմել է 565 000 մարդ, ինչը 15 տոկոսով ավելին է 2017 թվականի ցուցանիշից:

Հուլիս ամսին ամենաշատ Ռուսաստանից են եկել Վրաստան, աճը կազմում է 13,8%, Ադրբեջան (+9,8%), Թուրքիա (+20,5%) եւ Հայաստան (-4.2%):

Ինչ վերաբերում Եվրամիության երկրներին, ապա, միջազգային այցելուների թվով առաջատարը Ռումինիան է՝ (+260%), Էստոնիա (+83%), Գերմանիա (+59%), Չեխիա (+56%), Նիդերլանդներ (+55%), Մեծ Բրիտանիա (+44%) եւ Լեհաստան (+42%):

Առանձնակի աճ է գրանցվել Չինաստանից (+115%), Կորեայից (+83%), Բելառուսից (+55%), ԱՄՆ-ից (+54%), Սաուդյան Արաբիայից (+44%) եւ այլ երկրներից:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՆԽՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՁԸ

Հուլիսի 28-ից օգոստոսի 3-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի Գուրիայի եւ Զեմո Սվանեթիի բաժանմունքի աշխատակիցները, Զուգդիդիի շրջանի Ղուլիշկարի եւ Ռուխի գյուղերում անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտել են Վրաստանի վարչական իրավախախտման օրենսգրքի 1552 հոդվածով նախատեսված աքցիզավորման ենթակա ապրանք՝ չաքցիզավորված սիգարեթի (ընդհանուր առմամբ՝ 19820 գլանակ) փոխադրման փաստ: Վրաստանի օրենսդրության համաձայն, ապօրինի ապրանքը բռագրավվել է, գործը հետաքննության համար փոխանցվել է դատարանին:




## ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՍԻԳԱՐԵՏ

Օգոստոսի 5-ին, «Սարփի» եւ «Կարմիր կամուրջ» մաքսային անցումակետրում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները հայտնաբերել են, ընդհանուր առմամբ, 1940 գլանակ չհայտագրված ծխախոտ: Մաքսանենգային ապրանքը, կասկածի հիման վրա անցկացված խուզարկության ժամանակ, հայտնաբերվել է Վրաստանի քաղաքացիներ Ա.Տ.-ի եւ Ջ.Մ.-ի մոտ:

Վրաստանի հարկային օրենսդրության համաձայն, Վրաստանի քաղաքացի Ա.Տ.-ից՝ ապօրինի սիգարետները, իսկ քաղաքացի Ջ.Մ.-ի ավտոտրանսպորտային միջոցը բռնագրավվել է: Նրանցից յուրաքանչյուրը տուգանվել է 1000-ական լարիով:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՏԱՐԵԼԻՑ

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՏԱՍՆԱՄՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պուտովիչը, Լինաս Լինկեւիչուսը եւ Էդգար Ռենկեւիչը, ինչպես նաեւ՝ Ուկրաինայի փոխվարչապետ Պավել Ռոզենկոն:

Ռուս-վրացական պատերազմի 10-րդ տարելիցի կապակցությամբ, Վրաստանի ղեկավարության ու հատուկ ժամանած հյուրերի՝ Լեհաստանի արտաքին գործերի նախարար Յացեկ Չապուտովիչի, Լիտվայի արտաքին գործակալության ղեկավար Լինաս Անտասաս Լինկեւիչուսի, Լատվիայի արտաքին գործերի նախարար Էդգար Ռենկեւիչի եւ Ուկրաինայի փոխվարչապետ Պավել Ռոզենկոյի մասնակցությամբ, կլոր սեղանի ձեւաչափով անցկացվեց՝ «Խաղաղության եւ անվտանգության համար-2008 թվականի Ռուսաստան-Վրաստան պատերազմից 10 տարի անց» հանդիպումը:

Տասնամյա տարելիցի շրջանակներում՝ հատուկ ժամանած հյուրերն այցելեցին բռնազավթված գոտի՝ հարգանքի տուրք մատուցեցին Վրաստանի տարածքային ամբողջականության համար մարտում զոհվածների հիշատակին եւ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահի, վարչապետի եւ խորհրդարանի նախագահի հետ:

Աշխարհի ավելի քան 25 երկրների ղեկավարներ, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ իրենց աջակցությունն են հայտնել Վրաստանին, նրա տարածքային ամբողջականությանը, եւ Ռուսաստանին կոչ արել զորքերը դուրս բերել Վրաստանի պատմական տարածքներից՝ Աբխազիայից եւ Ցխինվալիի երկրամասից, չեղարկել Աբխազիայի եւ, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի «անկախության» ՝ճանաչումը:

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ.
# «ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՑ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նա շնորհակալություն է հայտնել բարեկամ երկրներին՝ հստակ աջակցության համար, որը նրանք դրսեւորեցին այս օրերի ընթացքում:

- Դրա հետ մեկտեղ, մենք լսել ենք հայտարարություն, որ կա ցանկություն, վերականգնել միջազգային հարաբերությունները: Լսել ենք այլ տիպի հայտարարություններ եւս: Մեր պատասխանը շատ հստակ է հարաբերությունների կարգավորման միակ ուղին Վրաստանից ռուսական զորքերի դուրսբերումն է

- 2008 թվականին կնքվել է հրադադարի մասին պայմանագիր, համապատասխանաբար, ցանկանում եմ մեկ անգամ եւս կոչ անել Ռուսաստանին, կատարել ստանձնած պարտականությունները եւ դուրս բերել իր ռազմական ստորաբաժանումները Վրաստանի տարածքից: Դա կլինի ճիշտ ահազանգ, որպեսզի սկսենք մեր հարաբերությունների կարգավորումը»,- ընդգծել է վարչապետը:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի անց՝ տարածում է հռչակագիր: Անվտանգության եւ արտաքին քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի անունից հրապարակված հայտարարությունում ասվում է, որ Եվրամիությունը այսօր, ինչպես երբեք, աջակցում է Վրաստանի տարածքում առկա կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանը:

Մեծ Բրիտանիայի նախագահությամբ, 2018 թվականի օգոստոսի 8-ին անցկացված ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նիստին, քննարկվեցին ռուս-վրացական պատերազմի տասնամյակի հետ կապված, Վրաստանի բռնազավթված տարածաշրջաններում առկա իրավիճակը եւ հակամարտության կարգավորման հարցը:

ՄԱԿ-ում Մեծ Բրիտանիայի մշտական ներկայացուցիչ Կարեն Պիրսը, նիստի ավարտից հետո, ԱՄՆ-ի, Նիդերլանդների, Ֆրանսիայի, Լեհաստանի, Շվեդիայի եւ Մեծ Բրիտանիայի անունով հատուկ հայտարարություն արեց, Ռուսաստանին կոչ անելով կատարել 2008թ. օգոստոսի 12-ին կնքված վեց կետային պայմանագիրը:

Վրաստանի դեմ Ռուսաստանի կողմից իրականացված ագրեսիայի 10-րդ տարելիցի հետ կապված հայտարարություն են հրապարակել Դանիայի, Սլովակիայի, Ճապոնիայի, Նորվեգիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, ընդհանուր առմամբ 25 երկրների արտաքին գերատեսչությունները: Նշվել է, որ Ռուսաստանը պետք է հարգի 2008 թվականի հրադադարի պայմանագիրը:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության հայտարարությամբ, Ռուսաստանի կողմից Վրաստանի շրջանների, Աբխազիայի եւ Ցխինվալիի անկախ պետություններ ճանաչելը անթույլատրելի է եւ անընդունելի:

# ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԲԵՐԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԿՈԹԵԼԻԱՑԻ ԹԱՄԱԶ ՄԵԼԻՔԻՁԵԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Օգոստոսի 8-ին, Ախալքալաքիի Կոթելիա գյուղում, ծաղիկներ խոնարհվեցին օգոստոսյան պատերազմի մասնակից Թամազ Մելիքիձեի շիրիմին:*




ինքն ասաց՝ ես չեմ կարող չգնալ, ես զինվոր եմ: Ուզում էր հերոս լինել, մեկ տարի էլ չկար, որ բանակում պայմանագրային զինծառայող էր: Թամազն ուզում էր հերոս դառնալ... Այսօր նա հերոս է»,- պատմեց կինը:

Թամազ Մելիքիձեն զոհվեց 32 տարեկան հասակում, 2008 թվականին:

«Այդ օրերին երեխաների հետ մենք այստեղ էինք, անհանգիստ էինք, մեզ զանգեցին, ասացին, որ նա զոհվել է, եւ դին չեն կարող գտնել, հետո մարմինը գտան՝ անճանաչելի էր: 10 տարի է անցել, բայց ես նորից չեմ հավատում, որովհետեւ շատ դժվար է հուղարկավորել մի մարդու, ում դին չես տեսնում»,- ասաց Թամազի տիկին Թեա Ջափարիձե-Մելիքիձեն:

Այսօր, ամուսնու մահից հետո, Թեան իր մեջ ուժ է գտնում աշխատանքի անցնել Պաշտպանության նախարարություն, այդպիսով շարունակել ամուսնու կիսատ թողած գործը:

10 տարի անց, կրկին օգոստոս ամիսն է, Ախալքալաքիի մունիցիպալիտետի տարբեր բնակավայրերից բոլորը հավաքվել են Կոթելիա գյուղի բարձունքում գտնվող գերեզմանոցում: Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Ախալքալաքիի քաղաքապետ Յուրի Ունանյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, գյուղի եւ շրջանի բնակիչները իրենց հարգանքի տուրքը մատուցեցին այս գյուղից Թամազ Մելիքիձեին: Ով 2008 թվականի օգոստոսի 6-ին սեփական կամքով մեկնեց հակամարտության գոտի եւ զոհվեց օգոստոսի 9-ի առավոտյան ռմբակոծության հետեւանքով:



Մինչեւ պատերազմի սկսվելը Մելիքիձեների ընտանիքը Գորիում էր ապրում, քանի որ Թամազ Մելիքիձեն պայմանագրային զինծառայող էր, հայրենի գյուղ՝ Կոթելիա էին եկել հանգստանալու ընդամենը երկու օր առաջ: Օգոստոսի 6-ին ստացած զանգն անդառնալի հետեւանքներ ունեցավ Մելիքիձեների ընտանիքում: Թամազի ընտանիքը համաձայն չէր նրա որոշման հետ, նրանք որդուն հորդորում էին չգնալ, սակայն որդին, առանց վարանելու, մեկնեց պատերազմական գոտի, ասելով՝ ես զինվոր եմ:

«Մենք շատ խնդրեցինք, որ չգնա, բայց

2008 թվականին Ախալքալաքիում փողոց են անվանել Թամազ Մելիքիձեի անունով: Հերոսի անունն է կրում նաեւ Կոթելիա գյուղի հանրային դպրոցը, որպեսզի սերունդները հիշեն ու արժանին մատուցեն պատերազմի հերոսներին:

*ԱՂՈՒՆԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ*
*Լուսանկարները՝*
*ԱՐՄԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ*

## ԹՈՂ ՍՊԻԱՆԱՆ ՏԱՍՆԱՄՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՔՈ ՎԵՐՔԵՐԸ, ՍԻՐԵԼԻ ԶՈՅԱ

Արդեն ստեղծված ավանդույթի համաձայն, վիրահայության ներկայացուցիչներ «Ապավեն-Վրաստան» ընկերության գլխավոր տնօրեն, համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ Ռաֆայել Աղաջանյանը «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր, «Վրաստանի հայերի միության» փոխնախագահ Վան Բայբուրթյանը այցելեցին տասնամյա վաղեմության պատերազմից տուժած, Գորիի Սուխիշվիլի փողոցի բազմահարկ շենքի բնակիչ Զոյա (Սոֆիկ) Մուրադովային: Հենց այս հասցեի դիմացի շենքի ավերակներում, տասը տարի առաջ, ռազմական թղթակցի կողմից լուսանկարած ռումբերից փշրված աղյուսների կույտին ընկած Զոյա Մուրադովայի լուսանկարը դարձել է ռուս-վրացական պատերազմի խորհրդանիշներից մեկը:



Գորի. 2008 թվականի օգոստոս, Զոյա Մուրադովան

Նշենք, որ Գորիի նախկինում բամբակագործական կոմբինատի ջուլհակուհի, ընթացիկ տարվա օգոստոսին իր 64-ամյակը բոլորած Զոյա Մուրադովան, ով այն չարաբաստիկ օգոստոսի 8-ի ռմբակոծություններից հետո, վիրավորվել էր, այս տարիների ընթացքում ենթարկվել է 12 վիրահատության՝ շարունակելով գամված մնալ անկողնում, տեղաշարժվելով միայն հաշմանդամի սայլակով: Նրա հետ միասին տանն ապրում է եւս 5 հոգի:



Գորի. 2018 թվականի օգոստոս, Զոյա Մուրադովան այսօր

Այցելուները, թբիլիսահայերի անունից Զոյա Մուրադովայի ընտանիքին նվիրեցին սառնարան:

*Լուսանկարը՝*
*ԱՆՆԱ ԹԱՆԴԱՐՅԱՆԻ*